պտոյտ էին գալիս դէմքերի վրայ, հպարտորէն դիտում հանդիսականներին եւ վստահ իրենց հրապոյրով՝ գոռոզ, անմատչելի՝ իշխում էին դահլիճի վրայ:

Էլիսնօրան նստած էր գրեթէ անշարժ, ինքը իր մէջ ամփոփուած, վարժ իր մօր շուքի մէջ ապրելու, ամբողջովին տարուած երաժշտութիւնով եւ, ինձ համար, աւելի գեղեցիկ քան իր մայրը, որովհետեւ հոգեպէս աւելի խոր:

Երբեմն, ձեռքում բռնած հովահարը նա լքում էր ծունկերի վրայ, աչքերը յառում դէպի հեռուն ու կանգ առնում մի ինչ որ երազի վրայ, ձանձրալի այս միջավայրից դուրս, կեղծ այս լուսաւորութիւնից մի վայրկեան ազատուած եւ ո՞վ է իմանում ինչ բոցավառ մըտածումների մէջ կորած:

Ու այն օրը, երբ պատահաբար, ես նրա հետ ծանօթացայ, իր առաջի խօսքերից ես զգացի, որ պաշտօնական, ընկերային իր ձեւերի տակ, թաղնուած էր զսպուած այն երաժշտականութիւնը, հոգեկան այն հուրը եւ խորութիւնը, հոգեբանական այն բարդութիւնը, որ յատուկ է կանացի եզակի անհատականութիւններին:

Երկու, տարբեր աշխարհներից եկած մեր զգացողութիւնների մէջ նետուեց անտեսանելի այն կամուրջը, որը կապ է եւ անցք, հաղորդակցութիւն եւ շղթայ:

Եւ այն օրուանից ի վեր, Վենետիկը, որ ինձ համար պարզ տեսարան էր, աչքերի անմման հաճոյք եւ գեղարուեստական խնդիր, կամաց կամաց կերպարանափոխուեց, դարձաւ իրական տարր, որի մէջ վիճակուած էր ինձ ապրել, ռիթմ՝ զարկերակիս հետ միասին բաբախող եւ մարմին՝ մարմնիս հետ:

Լոյսերը խաչաձեւեցին:

Սրուած զգայնութեանս մէջ ականթ եւ զմրուխտ փչրող վերջալոյսները արիւն թորեցին եւ մարմնիս վրայ զգացի կենդանացած մարմարների սարսուռը:

Կեանքը սահում էր հարիւրաւոր կամուրջների վրայից՝ թեթեւ, նուրբ արունքները բաց եւ ծփող սեւ շալը վայելչօրէն նետուած ուսերին:

Էլիսնօրան կարողանում էր ամէն մի անկիւնից ջուրակի դիւթիչ մի ձայն լսել: Նրա աչքերի հետ ման էին գալիս հրապուրուած իմ աչքերը: Նա տեսնում էր ջուրերի տակ ապրող խորհրդաւոր կեանքը, փոքրիկ եւ աննշան քանդակի մէջ սառած իմաստը, քարերի վրայից սահող երազը, շուքերի մէջ անցնող պատկերների թափօրը: Նա տեսնում էր ամէն ինչ, որովհետեւ ամէն ինչ իր սեփականութիւնն էր, իր ներքին աշխարհից բխած եւ ձեւաւորուած կեանք էր: Ու նրա աչքերը նման էին նայադների աչքերին, որոնք ափից սրնդի ձայն են լսում եւ օդի մէջ կայծկլտող արծաթէ զանգակ:

Հարբեցուցիչ օրեր:

Պտոյտներ նեղլիկ կալլէների միջից դէպի հեռաւոր մի պալատի վրայ ընկած երկնքի կապոյտ մի կտորի համար: Շիկագոյն իր մազերի մէջ թառած լուսնոյ շողը եւ քարի տակ կկկլող իր ձայնի աղբիւրը, հոգեկան հարիւրաւոր շեշտերից անցած՝ վոխտ եւ բիւրեղէ փայլփլումներով: Ու կեանքին եւ երեւոյթներին մօտենալու նրբագին այն ձեւը, որ ամէն բան երգի է վերածւում. ո՛չ այնքան մտածում ինչքան սարսռող մթնոլորտ մտքի շուրջը, հօրդոյի խոր եւ մելամաղձոտ ձայն, զգայարանքի միջից պոկած ակունքների մի շարք եւ սէր՝ գունաւոր, ափրիկեան թռչունի թեւերի նման բացուած, անբնական մի լուսնի լուսաւորութեան տակ:

Սիրած ամէն մի կնոջ հետ մենք մի երազ ենք ապրում:

Նոր աչքերով նոր մի աշխարհ ենք մըտնում:

Սէրը՝ գիտութիւն է:

Վենետիկը՝ բիւզանդական մի թագուհու նման՝ Թէօտորա՝ նստում էր թանկագին քարերով զարդարուած մի գահի վրայ, վսեմ՝ իր ոսկէ թագի տակ, գոռոզ եւ մեծդի՝ մութ կըտաւի վրայ շարուած ադամանդների պատմուճանով. անշարժ եւ փառաւոր, անմատչելի եւ մտերիմ. չափազանց կարմիր շրթունքների մէջ՝ մահ սեղմած եւ կապոյտ մեծ աչքերը յառած՝ սիրային անկարելի մեծ երազի վրայ:

Ես ման էի գալիս գինովցած քայլերով, կորած՝ անբնական եւ դիւթիչ այս աշխարհում, բարձր ալիքների մէջ ընկած մակոյկի

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան